ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

711-Ն 20 06 2017թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Հաստատել՝

1) Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն Հավելված 1-ի:

2) Հանրակրթական հիմնական մասնագիտացված պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն Հավելված 2-ի:

3) Հանրակրթական հիմնական հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն Հավելված 3-ի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության և իրավաբանական վարչությունների պետերին՝ փաստաթուղթը, օրենքով սահմանված կարգով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչությանը (պետ՝ Գ. Եղինյան)՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացնել՝ հիմք ընդունելով հաստատված օրինակելի ուսումնական պլանները:

4. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հանրակրթության վարչությանը (պետ՝ Ա. Արշակյան)՝ ապահովել ուսումնական հաստատությունների գործունեությունը՝ օրինակելի ուսումնական պլանների պահանջներին համապատասխան:

5. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտին (տնօրեն՝ Ն.Ղուկասյան)՝ իրականացնել անհրաժեշտ օժանդակություն ուսումնական հաստատություններին՝ օրինակելի ուսումնական պլաններով ուսումնական հաստատությունների գործունեությունն ապահովելու նպատակով:

6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ.Մկրտչյանին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված 1
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2017 թվականի -ի -ի
N -Ն հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

Ի. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) 2017-2018 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները (այսուհետ՝ Ուսումնական պլան), բացառությամբ սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի 9-րդ աղյուսակի, ունեն երկու՝ պետական և դպրոցական բաղադրիչ: Պետական և դպրոցական բաղադրիչները պարտադիր են և պետական ուսումնական հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Հաստատությունը Ուսումնական պլանի հիման վրա դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ հաստատում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլանը(ները):

1. Հաստատության Ուսումնական պլանը սահմանում է միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների և հանրակրթական պետական ծրագրի նորմատիվային ծավալը (սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը)՝ ըստ դասարանների:

2. Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) համաձայնությամբ՝

1) արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների ուսուցումն առավել բարենպաստ պայմաններում կազմակերպելու համար,
2) բազմահամակազմ կամ թերբեռնված դասարանների առկայության դեպքում,
3) Նախարարության կողմից երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում իրականացնելու դեպքում:

3. Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի տնօրինման կարգը սահմանված է՝

1) «Հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումներ»-ում,
2) օտար լեզվի ընտրությունը՝ «Օտար լեզվի ընտրության կարգ»-ում:

4. Ուսումնական պարապմունքները Հաստատությունում սկսվում են 2017թ. սեպտեմբերի 1-ին, ավարտվում 2018թ. մայիսի 25-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա և մայիսի 26-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ և 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:

5. Ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպվում է՝ «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հաստատության 2017-2018 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների» հիման վրա՝ յուրաքանչյուր սովորողի համար կազմելով անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ):

6. Ուսումնական պլանի պետական պարտադիր և դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովմանը:

7. Հաստատությունում (2-12-րդ դասարաններ) գործում է սովորողների գնահատման 10 միավորային սանդղակ:

8. Գիտելիքների ստուգումների, հիմնական և միջնակարգ կրթության ավարտական և պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման այլ սանդղակները բերվում են գնահատման 10 կամ 20 միավորային գրանցման:

9. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների (գնահատականի) հիման վրա՝ տարեկան գնահատականները՝ բացառությամբ սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի (այսուհետ՝ Հավելված 1) 10-րդ կետով նախատեսված դեպքի:

10. Առաջին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում. ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 846-Ն հրամանով հաստատված կարգի:

11. Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի (մեկ ակադեմիական դասաժամի) տևողությունը 45 րոպե է:

12. Տարրական դպրոցում յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող և վերականգնող վարժություններին ու խաղերին՝ Նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:

13. Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորոներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2017թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը ներառյալ, ձմեռային՝ 2017թ. դեկտեմբերի 25-ից 2018թ. հունվարի 7-ը ներառյալ, գարնանային՝ 2018թ. մարտի 26-ից ապրիլի 1-ը ներառյալ:

14. Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2017թ. հոկտեմբերի 23-ից նոյեմբերի 5-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2017թ. դեկտեմբերի 25-ից 2018թ. հունվարի 21-ը ներառյալ, գարնանայինը՝ 2018թ. մարտի 19-ից ապրիլի 1-ը ներառյալ:

15. Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2017թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2017թ. դեկտեմբերի 25-ից 2018թ. հունվարի 21-ը ներառյալ և գարնանայինը՝ 2018թ. մարտի 26-ից ապրիլի 1-ը ներառյալ:

16. Նախարարության, տարածքային կառավարման լիազորված մարմնի (Երևանի քաղաքապետարանի) (այսուհետ՝ Լիազոր մարմին) ենթակայության հաստատությունների համար սույն հրամանի Հավելված 1-ի 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետներում Հաստատության նախաձեռնության դեպքում Լիազոր մարմնի կողմից կարող են կատարվել փոփոխություններ: Լիազոր մարմինը (մարզպետը, Երևանի քաղաքապետը) փոփոխությունները առնվազն 5 աշխատանքային օր առաջ համաձայնեցնում է Նախարարության հետ:

17. Նախարարությունը անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ և այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ բաց թողնված ժամերը մինչև ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու և ըստ Հաստատության ենթակայության՝ Լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով: Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում Հաստատության դիմումի հիման վրա Լիազոր մարմինը (մարզպետը, Երևանի քաղաքապետը) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելով Նախարարությանը:

Նախարարության ենթակայության հաստատություններում սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետների փոփոխությունները, ինչպես նաև Հաստատության կողմից լրացուցիչ արձակուրդի նախատեսումը կատարվում է Հաստատության նախաձեռնությամբ, Նախարարության համաձայնությամբ:

18. Ոչ պետական ուսումնական հաստատությունում արձակուրդների տևողությունը և ժամկետները, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները սահմանում է հիմնադիրը՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահելով Նախարարությանը:

19. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգ.

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է Ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված և (կամ) Նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին, հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման ծրագրերի իրականացմանը և (կամ) սովորողների նախասիրություններին, ուսումնական հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով:

2) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը պետական պարտադիր առարկաներին բաշխելու դեպքում ուսուցումն իրականացվում է սույն Ուսումնական պլանի միջնակարգ դպրոցի,

ինչպես նաև ավագ դպրոցի հոսքերի ուսումնական պլանների ընդհանուր հանրակրթական առարկաների համար նախատեսված ծրագրերով:

3) Նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվում է «Կիրառական տնտեսագիտություն» (9-րդ դասարան), «Տնտեսագիտություն» (10-11-րդ դասարան), «Կյանքի հմտություններ» (2-8-րդ դասարաններ), «Բնապահպանություն» (7-8-րդ կամ 8-9-րդ դասարաններ), «Էկոլոգիա» (8-9-րդ դասարաններ), «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում» (7-րդ կամ 8-րդ դասարան), «Ֆերմերային գործ» (11-12-րդ դասարաններ), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ և 11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (2-4-րդ դասարաններ, ավագ դպրոցի հումանիտար հոսքի 10-11-րդ դասարաններ), «Հայկական հարցի պատմություն (11-րդ դասարան)», «Հոգեբանություն» (7-8-րդ դասարաններ), «Մշակույթի պատմություն» (7-9-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը: Նշված առարկաների ուսուցումը այլ դասարաններում Հաստատության կողմից կարող է իրականացվել դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

4) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

5) Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ ելնելով Հաստատության, դասարանի պատրաստվածությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաև Նախարարության հանձնարարականներից:

6) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը պարտադիր է:

7) Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է Հաստատության ուսումնական պլանում և դասացուցակում:

20. Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում.

1) 12-րդ դասարանի առաջին կիսամյակում ուսումնասիրվող հանրակրթական պետական ծրագրի Ուսումնական պլանի նորմատիվային ծավալը սահմանվում է շաբաթական 34 դասաժամ՝ ապահովելով 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաների ուսումնասիրությունը:

2) Հաստատության 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված առարկաների ուսումնասիրությունն ավարտվում է 12-րդ դասարանի առաջին կիսամյակի վերջում՝ կիսամյակային (տարեկան) գնահատականով և (կամ) ամփոփիչ ատեստավորմամբ (պետական ավարտական քննությամբ), բացառությամբ «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) և սովորողի կողմից երկրորդ կիսամյակում ուսումնասիրության համար ընտրված առարկաների:

3) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի շաբաթական ուսումնական բեռնվածությունը ձևավորվում է պարտադիր ուսումնասիրության «Նախնական զինվորական

պատրաստություն» (ՆԶՊ) (1 ժամ) առարկայի և սովորողի ընտրությամբ առնվազն երեք առարկայի ուսումնառության համար հատկացված ժամաքանակից՝ ապահովելով առնվազն 31 դասաժամ:

4) Նորմատիվային 34 դասաժամի և սովորողի ուսումնական պարտադիր բեռնվածության 31 դասաժամի տարբերությունից մնացած 3 դասաժամը տնօրինում է սովորողը:

5) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաներին Հաստատության ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը տրվում է այդ առարկաների ուսումնական նյութի կրկնությանը:

6) «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) և սովորողի կողմից ընտրված առարկաների ուսումնասիրությունը (կրկնությունը) ավարտվում է 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի վերջում՝ կիսամյակային (տարեկան) գնահատականով և (կամ) պետական ավարտական քննությամբ:

7) 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում ուսումնասիրության համար իրենց կողմից ընտրված ուսումնական առարկաների ցանկը Հաստատության սովորողները ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում, մինչև դեկտեմբերի 1-ը գրավոր հայտնում են Հաստատության տնօրենին: Միասնական քննություններ հանձնող սովորողները ցանկում ներառում են նաև միասնական քննական առարկաները:

8) Եթե Հաստատության ուսումնական պլանով նախատեսված որևէ առարկա(ներ) դասարանի սովորողներից ոչ մեկը չի ընտրել, ապա այդ առարկային(ներին) ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը վերաբաշխվում է տվյալ դասարանի սովորողների կողմից ընտրված ուսումնական առարկաներին, և կազմվում է տվյալ դասարանի 2-րդ կիսամյակի ուսումնական պլանը:

9) Դասարանի ուսումնական պլանին համապատասխան՝ կազմվում է տվյալ դասարանի դասացուցակը:

10) Մեկից ավելի դասարանների առկայության դեպքում կարող են ձևավորվել միևնույն առարկան ուսումնասիրող զուգահեռ դասարանների սովորողներից կազմված ուսումնական խմբեր: Այդ դեպքում տվյալ ուսումնական առարկայից անհրաժեշտ գրանցումները կատարվում են առարկայական դասամատյանում: Կիսամյակային և տարեկան գնահատականներն այնուհետև փոխանցվում են դասարանի հիմնական դասամատյան:

11) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաների ուսումնական նյութի կրկնությունը սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի 20-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներին համապատասխան կազմակերպվում է դասարանային (դասացուցակին համապատասխան) և արտադասարանային ինքնուրույն ուսումնական գործունեության տեսակներով:

12) Սովորողը մասնակցում է միայն իր ընտրած առարկաների դասարանային ուսումնական պարապմունքներին:

13) Սովորողը մասնակցում է արտադասարանային ուսումնական պարապմունքներին այն դեպքում, երբ դասացուցակով նրա շաբաթական բեռնվածությունը պակաս է 31 դասաժամից:

14) Սովորողի արտադասարանային պարապմունքներին մասնակցության տևողությունը որոշվում է 31 ժամի և սովորողի դասացուցակային բեռնվածության տարբերությամբ:

15) Արտադասարանային պարապմունքներին սովորողի(ների) մասնակցությունը հաշվառվում է և գրանցվում համապատասխան մատյանում:

16) Արտադասարանային ինքնուրույն ուսումնական գործունեության տեսակներ են՝ ուսուցիչների կողմից տրված հանձնարարությունների կատարումը, լրացուցիչ ուսումնական գրականության և այլ աղբյուրների ուսումնասիրումը, գործնական և փորձնական աշխատանքների կատարումը, հիմնահարցերի հետազոտումը, ստեղծագործական աշխատանքը, տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարումը, գրավոր աշխատանքները, նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի կիրառումը, անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարումը, ուսումնական էքսկուրսիաների անցկացումը և այլն:

17) Սովորողն իր տնօրինմանը հատկացված 3 ժամը կարող է օգտագործել կրթական այլ ծառայություններ ստանալու նպատակով՝ տվյալ Հաստատությունում կամ այլ հաստատություններում:

21. Օտար լեզվի ընտրության կարգ.

1) Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում դասավանդվում է երկու օտար լեզու, որոնցից առաջինը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու:

2) Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու (բացի ռուսերենից և մյուս օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ 5-9-րդ դասարաններում (շաբաթական 1.5 կամ 2 ժամ) և 11-12-րդ դասարաններում (շաբաթական 2 ժամ)՝ Նախարարության կողմից հաստատված չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում: 10-րդ դասարանում երրորդ օտար լեզվի (շաբաթական 2 ժամ) դասավանդումը կարող է իրականացվել Հաստատության ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ 11-12-րդ դասարաններում պահպանելով առարկայական ծրագրի շարունակականությունը:

3) Նախարարության կողմից՝ Հաստատության մանկավարժական խորհրդի և ըստ Հաստատության ենթակայության լիազոր մարմնի առաջարկությունների հիման վրա, կարող է փոխարինվել Հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն) այլ օտար լեզվով, ինչպես նաև որոշվել նոր հիմնադրված Հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն:

22. Տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ) «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» առարկաների դասաժամերին դասարանը բաժանվում է երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 24 և ավելի է:

23. Միջին դպրոցում «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (5-9-րդ դասարաններ) առարկաների պարապմունքներին դասարանը բաժանվում է երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 24 և ավելի է: «Հայոց լեզու» (7-9-րդ դասարաններ), «Ինֆորմատիկա» (6-9-րդ դասարաններ՝ համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների պա-

ռապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 24 և ավելի է:

24. Դասարանը նույն կարգով կարող է կիսվել երկու խմբի նաև Նախարարության երաշխավորած «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ, 11-րդ դասարաններ) առարկայի պարապմունքների ժամանակ՝ դպրոցական բաղադրիչի ժամաքանակը այդ առարկային տրամադրելու դեպքում:

25. «Տեխնոլոգիա» առարկայի (5-7-րդ դասարաններ) պարապմունքներին դասարանը կիսվում է երկու խմբի՝ տղաների և աղջիկների՝ անկախ սովորողների թվից (ուսուցումը կազմակերպվում է յուրաքանչյուր խմբի համար հաստատված համապատասխան առարկայական ծրագրով):

26. 10-12-րդ դասարաններում «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», առարկաների դասաժամերին դասարանը բաժանվում է երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 20 և ավելի է: «Հայոց լեզու», «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) և ավագ դպրոցի արհեստագործական մասնագիտական դասընթացների դասաժամերին դասարանը կարելի է երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 20 և ավելի է:

27. Անհրաժեշտության դեպքում Հաստատությունն իրավասու է վերաբաշխելու առարկայի ուսուցմանը Ուսումնական պլանով հատկացված ժամերը՝ պահպանելով տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակը:

28. 8-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:

1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին:

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը:

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2018թ. հունվար-փետրվար ամիսներին:

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

29. 6-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Հայոց պատմություն» և այլ առարկաների ծրագրերով ամսական առնվազն 1 (մեկ) ժամ ուսուցումը կազմակերպվում է համակարգչային կաբինետում (դրա առկայության դեպքում)՝ ելնելով յուրաքանչյուր առարկայից մատուցվող ուսումնական նյութի բովանդակային և դասավանդման մեթոդական պահանջներից: Այն առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է օգտագործել ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կայքում (http://www.aniedu.am/),Կրթության ազգային ինստիտուտի կրթական ալիքից (https://www.youtube.com/user/Ruzaniko), http://informatika.am/

կայքից և «Հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարանում» (http://lib.armedu.am) տեղադրված էլեկտրոնային ուսումնական նյութերը:

30. 6-7-րդ դասարաններում «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաներից մեկը Հաստատության ընտրությամբ դասավանդվում է առաջին, մյուսը՝ երկրորդ կիսամյակում՝ ապահովելով սույն հրամանով հաստատված Հավելված 1-ով սահմանված՝ տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակի պահպանման պահանջը:

31. «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաների համաժամանակյա թեմաների ուսուցումն ապահովելու նպատակով ուսուցիչներին իրավունք է տրվում մասնակի փոփոխություններ կատարելու նշված առարկաների դասացանկում՝ պահպանելով յուրաքանչյուր առարկային հատկացված տարեկան ընդհանուր ժամաքանակը:

32. Հաստատությունում, ըստ կրթական ծրագրերի աստիճանների, տարրական, միջին և ավագ դպրոցներում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների համար «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցումը կարող է իրականացվել «Հանրակրթական դպրոցի հատուկ բժշկական խմբերի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի 1-12-րդ դասարանների ծրագրով», Հաստատության խմբակների համար նախատեսված ժամաքանակի շրջանակում կամ տվյալ դասարանի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասաժամերին՝ անհատական ծրագրով: Հաստատությունում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների գնահատում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից չի կատարվում:

II. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ 2017 - 2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

33. Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցի (այսուհետ՝ Ավագ դպրոց) օրինակելի ուսումնական պլանները սահմանում են հոսքային ուսուցման ծրագրեր իրականացնող Ավագ դպրոցում միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը՝ ըստ տարբերակված հոսքերի, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների և սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը՝ ըստ դասարանների:

34. Ավագ դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը՝

1) հիմնական - հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական,

2) ընդհանուր:

35. Ավագ դպրոցի X-XII դասարանների ուսպլանները ըստ հոսքերի տրված են.

1) ընդհանուր հոսքը՝ «Հաստատության ուսումնական պլան»-ում (համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 1-ի),

2) հումանիտար հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 2-ի),

3) բնագիտամաթեմատիկական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 3-ի),

4) արհեստագործական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի արհեստագործական հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 4-ի):

36. Ուսումնական պարապմունքները Ավագ դպրոցում սկսվում են 2017թ. սեպտեմբերի 1-ին և ավարտվում 2018թ. մայիսի 25-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա և մայիսի 26-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով ոչ պակաս, քան 34 ուսումնական շաբաթ Ավագ դպրոցի յուրաքանչյուր դասարանի համար:

37. Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ապահովմանը:

38. Ավագ դպրոցում գործում է գնահատման 10 միավորային սանդղակ: Ընթացիկ գնահատման ժամանակ կարող է կիրառվել նաև գնահատման այլ սանդղակ, որը բերվում է 10 միավորային գրանցման: Պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման սանդղակները բերվում են 10 կամ 20 միավորային գրանցման:

39. Ավագ դպրոցում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է:

40. Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների միջոցով՝ տարեկան գնահատականները՝ բացառությամբ այն առարկաների, որոնց ուսումնասիրությունը սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի 20-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջին համապատասխան ավարտվում է 12-րդ դասարանի առաջին կիսամյակի վերջում:

41. Ուսումնական պարապմունքների ընթացքում 10-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2017թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը ներառյալ, ձմեռային՝ 2017թ. դեկտեմբերի 25-ից 2018թ. հունվարի 7-ը ներառյալ, գարնանային՝ 2018թ. մարտի 26-ից ապրիլի 1-ը ներառյալ:

42. Հոսքային ուսուցման առարկաների դասերին ֆինանսական միջոցների առկայության դեպքում դասարանի կարող է սահմանվել 12-14 սովորող՝ սանիտարական նորմերի պահպանմամբ:

43. Ավագ դպրոցում «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» առարկաների պարապմունքներին դասարանը բաժանվում է երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 24 և ավելի է: «Հայոց լեզու» (7-9-րդ դասարաններ), «Ինֆորմատիկա» (6-9-րդ դասարաններ՝ համակարգ-

չային դասարանի առկայության դեպքում) առարկաների պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 20 և ավելի է:

44. Ավագ դպրոցի միևնույն դասարանի(ների) սովորողները ընդհանուր հանրակրթական բաղադրիչի շրջանակում ուսումնասիրվող երկրորդ օտար լեզվի (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու) դասաժամին խմբավորվում են ըստ իրենց կողմից հիմնական դպրոցում ուսումնասիրված օտար լեզվի՝ անկախ սովորողների թվից, բայց ոչ ավելի, քան երեք օտար լեզվի (բացի ռուսերենից) համար:

45. 12-րդ դասարանում ուսումնական գործընթացը իրականացվում է սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի 20-րդ կետի պահանջներին համապատասխան:

46. Օրինակելի ուսումնական պլանների կառուցվածքը.

Հոսքային (խորացված) ուսուցման Ուսումնական պլանները կազմված են ընդհանուր հանրակրթական, հոսքային (արհեստագործական հոսքում՝ մասնագիտական) և դպրոցական բաղադրիչներից:

1) Ընդհանուր հանրակրթական բաղադրիչը ներառում է հանրակրթական ուսումնական առարկան(երը) և յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված շաբաթական ժամաքանակ-ները՝ ըստ դասարանների: Ընդհանուր հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի (ենթահոսքի) համար:

2) Հոսքային բաղադրիչով սահմանված ժամաքանակը տրամադրվում է խորացված ուսուցմամբ առարկաների դասավանդմանը, իսկ արհեստագործական հոսքում՝ մասնագիտական դասընթացներին: Հոսքային բաղադրիչում ընդգրկված առարկաները (դասընթացները) ուղղված են սովորողի հետագա մասնագիտական կրթության հիմքերի ստեղծմանը և հանրակրթությունից մասնագիտական կրթության անցման շարունակականության ապահովմանը, իսկ արհեստա-գործական հոսքի պարագայում՝ նախնական մասնագիտական կրթության որոշակի որա-կավորումների շրջանակում համապատասխան հմտությունների ձեռքբերմանը:

3) Նախարարությունը, հաշվի առնելով տվյալ Ավագ դպրոցի առանձնահատկությունները, խորացված ուսուցմամբ առարկաների ցանկում կատարում է փոփոխություններ՝ տվյալ հոսքի խորացված ուսուցման առարկաներին ավելացնելով նոր առարկա(ներ)՝ Ավագ դպրոցի առաջարկության և սահմանված կարգով հաստատված առարկայական ծրագրի(երի) առկայության դեպքում:

4) Դպրոցական բաղադրիչն ընդգրկում է հոսքային ուսուցման բովանդակությունը լրացնող ընտրովի (լրացուցիչ) առարկաները, դասընթացները և դրանց ուսուցման համար ըստ դասա-րանների նախատեսված ժամաքանակները: Այս բաղադրիչը տնօրինում է դպրոցը՝ ղեկավարվելով Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկով:

5) Ավագ դպրոցը Ուսումնական պլանների հիման վրա ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչների տնօրինմամբ մշակում է յուրաքանչյուր հոսքի՝ տվյալ ուստարվա ենթահոսքերի իր ուսումնական պլանները: Ենթահոսքերի ուսումնական պլանները կազմելիս դպրոցն ընդհանուր հանրակրթական և հոսքային բաղադրիչներով նախատեսված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը հատկացնում է դպրոցական բաղադրի-չին:

6) Ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչները ֆինանսավորվում են պետական բյուջեից:
7) 10-11-րդ դասարաններում և 12-րդ դասարանի առաջին կիսամյակում շաբաթական ուսումնական պարտադիր բեռնվածությունը բոլոր հոսքերում սահմանվում է 34 դասաժամ:

47. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգը հոսքային ուսուցմամբ դասարաններում

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվում է Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկի, ինչպես նաև տվյալ հոսքային ուսուցմամբ դասարանի ընդհանուր հանրակրթական և հոսքային ուսուցման բաղադրիչների առարկաներին:
2) Ավագ դպրոցի խորացված ուսուցմամբ հոսքերի համար կարող են երաշխավորվել լրացուցիչ հետևյալ՝ «Գրաբար» (11-րդ դասարան), «Արտասահմանյան գրականություն» (11-րդ դասարան), «Բանահյուսություն» (հին և միջնադարյան շրջան, 11-րդ դասարան), «Ճարտասանություն» (11-րդ դասարան), «Արևմտահայերեն» (10-րդ կամ 11-րդ դասարան), «Պետության և իրավունքի հիմունքներ» (11-րդ դասարան), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հնագիտություն» (10-րդ դասարան), «Ազգագրություն» (10-րդ դասարան), «Հայաստանի հարակից երկրների պատմություն» (11-րդ դասարան), «Կրոնի պատմություն» (11-րդ դասարան), «Արվեստի պատմություն» (10-11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (բնագիտամաթեմատիկական հոսք, 10-11-րդ դասարաններ), «Քրիստոնեական բարոյագիտություն» (12-րդ դասարան), «Տնտեսագիտություն» (10-11-րդ դասարան), «Բարոյագիտություն» (10-րդ դասարան), «Տրամաբանություն (11-րդ դասարան), «Թվային համակարգեր» (10-րդ դասարան), «Երկրաչափության հիմունքներ» (12-րդ դասարան), «Դիսկրետ մաթեմատիկայի տարրեր» (11-րդ դասարան), «Աստղագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ռադիոէլեկտրոնիկա» (11-րդ դասարան), «Բնօգտագործման և բնապահպանության հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Էկոլոգիայի և կայուն զարգացման հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Կիրառական քիմիա» (11-րդ դասարան), «Գիտական ճանաչողության հիմունքներ» (11--րդ դասարան), «Բնական գիտությունները և մաթեմատիկան» (10-րդ դասարան), «Բնագիտական մտքի պատմություն» (11-րդ դասարան), «Երկրագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Քերականություն և բառագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Գրականություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Մասնագիտական կողմնորոշում» (10-րդ կամ 11-րդ դասարան) առարկաների ուսուցումը՝ դրանց առարկայական ծրագրերը Նախարարության կողմից հաստատվելուց հետո:
3) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

48. 10-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:
1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին:

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը:

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2018թ. հունվար-փետրվար ամիսներին:

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

49. Օտար լեզվի ընտրության կարգ.

1) Ավագ դպրոցում դասավանդվում է առնվազն երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու:

2) Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու կարելի է դասավանդել Նախարարության կողմից հաստատված համապատասխան առարկայական չափորոշիչներով և ծրագրերով (շաբաթական 2 ժամ), ուսումնական գրականության և ուսուցման համար անհրաժեշտ այլ պայմանների առկայության դեպքում:

3) Ավագ դպրոցը դասավանդվող օտար լեզուն կարող է փոխարինել այլ օտար լեզվով՝ Նախարարության որոշմամբ: Նախարարությունը քննարկում է Ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի առաջարկությունը օտար լեզվի փոխարինման վերաբերյալ և կայացնում համապատասխան որոշում:

4) Նոր հիմնադրված Ավագ դպրոցում դասավանդվող երկրորդ օտար լեզուն հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ որոշում է Նախարարությունը:

50. Սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի աղյուսակների պարզաբանումներ.

1) Սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 2-ում՝

ա. «[1]» նշագրումը նշանակում է, որ որպես խորացված ուսուցման առարկաներ՝ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև չորս առարկա:

բ. «[2]» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»:

գ. «Օտար լեզու-1» և «Ռուսաց լեզու-1» առարկաներն ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու-2» և «Ռուսաց լեզու-2» առարկաները:

2) Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) ընտրում է որոշակի թվով առարկաներ՝ համաձայն սույն ուսումնական պլանի 50-րդ կետի 1-ին ենթակետի ա. պարբերության պարզաբանման: Այդ դեպքում սովորողը չի ուսումնասիրում Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկաները:

3) Հումանիտար հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տրվում է Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին: Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի մաս II-ի «Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգի» համաձայն՝ պահպանելով տվյալ դասարանի

համար Ուսումնական պլանով սահմանված շաբաթական ժամաքանակը: Ուսուցումը կազմակերպվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված հոսքային և/կամ ընդհանուր հանրակրթական առարկաներիծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ:

4) Ավագ դպրոցի հումանիտար հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 2-ի)՝ 11-րդ դասարանում դպրոցական բաղադրիչում ձևավորված ժամաքանակից 0.5 ժամ կարող է հատկացվել «Հասարակագիտություն» առարկային՝ հանրակրթական դպրոցի ընդհանուր հոսքի համար նախատեսված ծրագրով ուսուցում կազմակերպելու նպատակով (համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 1-ի):

5) Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 3-ի)՝

ա. «[1]» նշագրումը նշանակում է, որ որպես խորացված ուսուցման առարկաներ՝ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև երեք առարկա:

բ. «[2]» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»:

գ. «Օտար լեզու-1» առարկան ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու-2» առարկան:

6) Սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 3-ում՝

ա. Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) առարկա(ներ) ընտրելու դեպքում չի ուսումնասիրում Ուսումնական պլանի Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկան(երը):

բ. Բնագիտամաթեմատիկական հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տրվում է Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին:

գ. Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի մաս II-ի «Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգի» համաձայն՝ պահպանելով տվյալ դասարանի համար Ուսումնական պլանով սահմանված շաբաթական ժամաքանակը: Ուսուցումը կազմակերպվում է հոսքային և ընդհանուր հանրակրթական առարկաների՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված առարկայական ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ:

դ. 11-12-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկան ուսումնասիրվում է հանրակրթական դպրոցի հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար նախատեսված ծրագրով:

ե. Եթե սովորողը 12-րդ դասարանում չի ուսումնասիրում «Օտար լեզու-1» առարկան, ապա շարունակում է ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված «Օտար լեզու-2» և «Ռուսաց լեզու» առարկաների համապատասխան ծրագրերի ուսումնասիրությունը:

զ. «Համաշխարհային պատմություն» առարկան ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի

Աղյուսակ 3-ի ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով:

1) Սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 4-ում՝

ա. «[1]» նշագրումը նշանակում է, որ մասնագիտական դասընթացներ (առարկաներ) են համարվում դպրոցի կողմից իրականացվող նախամասնագիտական ուսումնական ծրագրերը:

բ. «[2]» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»:

2) Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 4-ի)՝

ա. Մասնագիտական դասընթացների (առարկաների) ժամաքանակը ներառում է նաև պրակտիկ ուսուցման ժամերը:

բ. Ուսումնական պլանով 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի ժամաքանակը տնօրինվում է Սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի 20-րդ կետով սահմանված կարգով՝ ներառյալ ուսումնական պրակտիկայի կազմակերպումը: Ուսուցումը կազմակերպվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված հոսքային և/կամ ընդհանուր հանրակրթական առարկաներիծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ:

գ. «Համաշխարհային պատմություն» առարկան դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով (համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 4-ի):

3) Ռուսերենով ուսուցմամբ միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) Ուսումնական պլանի (համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 6-ի)՝ «Մայրենի» (հայերեն) առարկայի դասաժամերը 1-ին դասարանի 1-ին կիսամյակում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, 2-րդ կիսամյակում՝ տառուսուցմանը:

4) Ռուսերենով ուսուցմամբ և ասորերենի ուսումնասիրմամբ դասարանների Ուսումնական պլանով (համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 8-ի)՝

ա. 6-9-րդ դասարաններում «Հայոց եկեղեցու պատմությանը» լրացուցիչ դասաժամեր չեն հատկացվում:

բ. Ռուսերենով ուսուցմամբ դասարաններում «Մայրենի» (հայերեն) առարկայի դասաժամերը 1-ին դասարանի 1-ին կիսամյակում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, 2-րդ կիսամյակում՝ տառուսուցմանը:

5) Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող երեխաների անհատական ուսուցման Ուսումնական պլանով (համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 9-ի)՝

ա. Ռուսերենով ուսուցման դեպքում ռուսաց լեզվին տրվում են հայերենի (տարրական դպրոցում՝ «Մայրենի», միջին և ավագ դպրոցում՝ «Հայոց լեզու և գրականություն» առարկաների) համար հատկացված դասաժամերը՝ ապահովելով նույն ժամաքանակի սահ-

մաններում նաև ռուս գրականության ուսուցումը, իսկ ռուսերենի համար նախատեսված ժամաքանակը տրվում է հայոց լեզվի ուսուցմանը: 1-ին դասարանում ռուսաց լեզվին հատկացված ժամաքանակից 2 ժամը տրվում է հայերենի (Մայրենի) ուսուցմանը:

բ. Տնային պայմաններում ուսուցում կազմակերպվում է բնակավայրը սպասարկող բուժ-հիմնարկի փաստաթղթերի հիման վրա (եթե բուժման ընթացքը տնային պայմաններում շարու-նակվելու է մեկ ամսից ավելի)՝ ըստ Հաստատության ենթակայության՝ համապատասխան Լիազորված մարմնի գիտությամբ:

գ. Տնային պայմաններում ուսուցման կազմակերպումն իրականացնում է այն Հաստա-տությունը, որտեղ հաշվառված է սովորողը:

դ. Տնային պայմաններում ուսուցում կազմակերպող ուսուցիչները վճարվում են դրույ-քաչափով, եթե ուսուցումը նախատեսվում է ամբողջ ուստարվա համար, մնացած դեպքերում՝ ժամավճարով:

ե. Հիվանդանոցներում երկարատև բուժվող երեխաների ուսուցումը կազմակերպվում է՝ ըստ դասարանների՝ սույն կետի պահանջների պահպանմամբ, տվյալ բուժհաստատությունը սպասարկող ուսումնական հաստատության կողմից (համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1.1-ի Աղյուսակ 9-ի):

Հավելված 1.1
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2017 թվականի –ի -ի N-Ն հրամանի

Աղյուսակ 1

Հաստատության ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	2	2	3	3	3	3	3	3	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	2	1	1
Հայաստանի աշխարհ.	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմ.	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	1	1	1	1	1	1	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	2	2	2
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	-	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	-	1.5	1.5
Մաթեմատիկա (Հանրահաշիվ, Երկրաչափություն)	-	-	-	-	-	-	-	-	-	3	-	-
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	2	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-	-	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	2	2	2	2.5	2.5	2.5	2.5	4	2	5.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35	34	34	34

Աղյուսակ 2

Ավագ դպրոցի հումանիտար հոսքի ուսումնական պլան
X-XII դասարաններ

Առարկայախումբ	**Առարկա**	**Շաբաթական ժամերի քանակը**		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
Խորացված ուսուցմամբ առարկաներ [1]	Հայոց լեզու-1	2	2	3
	Հայ գրականություն-1	3	4	5
	Հայոց պատմություն-1	3	5	8
	Համաշխ. պատմություն-1	3	5	8
	Օտար լեզու-1	3	5	8
	Ռուսաց լեզու-1 (Ռուսաց լեզու, Ռուս գրականություն)	3	5	8
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	3	3
	Հայոց պատմություն	2	2	2
	Համաշխ. պատմություն	2	1	1
	Հասարակագիտություն	2	1.5	1
	Օտար լեզու-2	2	2	2
	Ռուսաց լեզու-2	2	2	2
	Հայոց եկեղեցու պատմություն	1	1	-
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա [2]	2	1	1
	Բնագիտական առարկա [2]	1	1	-
	Բնագիտական առարկա [2]	1	-	-
	Բնագիտական առարկա [2]	1	-	-
	Ինֆորմատիկա	1	1	-
	Ֆիզկուլտուրա	3	3	1
	ՆԶՊ	1	1	1
	Դպրոցական բաղադրիչ			
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 3

Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի
ուսումնական պլան
X-XII դասարաններ

Առարկայախումբ	**Առարկա**	**Շաբաթական ժամերի քանակը**		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
Խորացված ուսուցմամբ առարկաներ [1]	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն) -1	7	8	8
	Ֆիզիկա - 1	4	5	8
	Քիմիա - 1	4	5	8
	Կենսաբանություն -1	4	5	8
	Աշխարհագրություն -1	3	5	8
	Ռուսաց լեզու-1 (Ռուսաց լեզու, Ռուս գրականություն)	3	5	8
	Օտար լեզու -1	3	5	8
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Հասարակագիտություն	2	1,5	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	5	5	5
	Բնագիտական առարկա [2]	2	1	1
	Բնագիտական առարկա [2]	1	1	-
	Բնագիտական առարկա [2]	1	1	-
	Բնագիտական առարկա [2]	1	-	-
	Ինֆորմատիկա	1	2	1
	Օտար լեզու-2	2	2	2
	Ռուսաց լեզու	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1
	ՆԶՊ	1	1	1
	Դպրոցական բաղադրիչ			
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 4

Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի ուսումնական պլան
X-XII դասարաններ

Առարկայախումբ	**Ուսումնական առարկաներ**	**Շաբաթական ժամերի քանակը**		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
Մասնագիտական դասընթացներ (առարկաներ)[1]		9	13	15.5
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակր-թական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Օտար լեզու	2	2	2
	Ռուսաց լեզու	2	2	2
	Հասարակագիտություն	2	1	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա [2]	2	1	1
	Բնագիտական առարկա[2]	1	1	-
	Բնագիտական առարկա[2]	1	-	-
	Բնագիտական առարկա[2]	1	-	-
	Ինֆորմատիկա և ՏՀՏ	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆԶՊ	1	1	1
	Դպրոցական բաղադրիչ			
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 5

Ռուսերենի խորացված ուսուցմամբ I - IX դասարանների ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	3	4	4	4	4	4	4	4
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5
Հայոց եկեղեցու պատմություն	-	-	-	-	1	1	1	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	-	-	1	1	1.5	1.5	1.5	1.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35

Աղյուսակ 6

Ռուսերենով ուսուցմամբ միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Ռուսաց լեզու	4	8	6	8	6	3	3	3	2.5	3	3	3
Ռուս գրականություն	-	-	-	-	-	2	2	2	2	3	3	3
Մայրենի (հայերեն)	3	3	5	4	6	5	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	5	4	5	5	-	-	-	-	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	1.5
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Տեխնոլոգիա	2	1	1	1	1	1	2	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Հայաստանի աշխարհ.	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	1.5	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1	1.5	1	1
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	1	1	1	1	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	1	1.5	2
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	3	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	-	1	-	1.5	0.5	0.5	1	-	0.5	2.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35	34	34	34

Աղյուսակ 7

Ազգային փոքրամասնությունների միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Հայոց լեզու	3	5	5	4	6	5	3	2	3	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	2	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	2	3	3
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մայրենի լեզու և գրակ.	4	4	4	4	4	3	3	3	3	3	3	3
Ռուսաց լեզու	-	2	2	3	3	3	3	2	3	2	2	2
Մաթեմատիկա	4	4	5	4	5	5	-	-	-	-	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	1.5
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Տեխնոլոգիա	2	1	1	1	1	1	2	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Հայաստանի աշխարհ.	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	1.5	-	1	1	1
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1	2	1	1
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	2	2	2
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	3	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	-	2	-	1.5	0.5	2	0.5	-	-	2.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35	34	34	34

Աղյուսակ 8

Ռուսերենով ուսուցմամբ և ասորերենի ուսումնասիրմամբ դասարանների ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Ռուսաց լեզու	2	7	4	6	5	3	2	2	2	2	2	2
Ռուս գրականություն	-	-	-	-	-	2	2	2	2	3	2	2
Ասորերեն լեզու	2	2	3	3	3	2	2	2	2	2	2	2
Ասորերեն գրականություն	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
Մայրենի (հայերեն)	3	3	5	4	5	5	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	2	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-	-	-	-
Հանրահաշիվ	-	-		-	-	-	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	1.5
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Տեխնոլոգիա	2	1	1	1	1	1	1.5	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Հայաստանի աշխարհ.	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	1.5	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	1.5	1	1
Համաշխարհային պատմ.	-	-	-	-	-	1	1	1	1	1.5	1	1
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	0.5	0.5	0.5	0.5	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	1	2	2
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	2.5	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	1.5	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	1.5	2	2	1.5	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	2.5
Ընդամենը	20	24	26	28	30	32	34	35	36	34	34	34

Աղյուսակ 9

Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	Տարրական դպրոց				Միջին դպրոց				Ավագ դպրոց			
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	5	4.5	4.5	4.5	4.5	4	-	-	-	-	-	-
Հայոց լեզու և գրակ.	-	-	-	-	-	-	3.5	2.5	3	2.5	2	2
Ռուսաց լեզու	-	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Օտար լեզու	-	-	1	1	1	1	1	1	1	1	1	1
Ես և շրջակա աշխարհը	-	0.5	0.5	0.5	-	-	-	-	-	-	-	-
Մաթեմատիկա	2	3	2	2	2	2	2	3	2.5	2.5	2	2
Հայոց պատմություն	-	-	-	-	-	0.5	1	0.5	0.5	0.5	0.5	0.5
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	0,5	0,5	0.5	0.5	0.5
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	1	1	1
Քիմիա	-	-	-	-	-	-	0.5	0,5	0.5	0.5	0.5	0.5
Բնագիտություն	-	-	-	-	0.5	0.5	-	-	-	-	-	-
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	0.5	0,5	0.5	0.5	0.5	0.5
Աշխարհագրություն	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Ընդամենը	7	9	9	9	9	10	11	11	11	11	10	10

Հավելված 2
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2017 թվականի -ի -ի
N -Ն հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Հանրակրթական հիմնական ընդհանուր մասնագիտացված ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Մասնագիտացված դպրոց) 2017-2018 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները (այսուհետ՝ Ուսումնական պլան) սահմանում են ընդհանուր և մասնագիտացված հանրակրթական ծրագրերի բովանդակության կառուցվածքը, ուսումնական առարկաներին (դասընթացներին) հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների և սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը՝ ըստ կրթական աստիճանների:

2. Մասնագիտացված դպրոցի Ուսումնական պլանն ունի երկու՝ պետական և դպրոցական (մասնագիտական) բաղադրիչ: Պետական և դպրոցական (մասնագիտական) բաղադրիչները պարտադիր են և պետական ուսումնական հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Մասնագիտացված դպրոցը, Ուսումնական պլանի հիման վրա դպրոցական (մասնագիտական) բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ հաստատում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլանը(ները):

3. Մասնագիտացված դպրոցի Ուսումնական պլանը կազմված է նրա կողմից իրականացվող մասնագիտացված ծրագրերի (ռազմագիտության, սպորտի, արվեստների, արհեստների, գիտության որևէ բնագավառի) հիման վրա:

4. Ուսումնական պարապմունքները Մասնագիտացված դպրոցում սկսվում են 2017թ. սեպտեմբերի 1-ին և ավարտվում 2018թ. մայիսի 25-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա և մայիսի 26-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ և 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:

5. Ուսումնական պլանի պետական պարտադիր և դպրոցական (մասնագիտական) բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով, ինչպես նաև մասնագիտական առարկաների (դասընթացների) ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովմանը:

6. Մասնագիտացված դպրոցում հանրակրթական ընդհանուր ծրագրերով ուսումնական գործընթացն իրականացվում է խմբային եղանակով, իսկ մասնագիտացված ծրագրերի դեպքում՝ խմբային և անհատական եղանակներով:

7. Մասնագիտացված դպրոցում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է:

8. Մասնագիտացված դպրոցում հանրակրթական ընդհանուր ծրագրերով ուսումնական գործընթացը կազմակերպվում է սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի «Հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումների» պահանջներին համաձայն:

9. Մասնագիտացված դպրոցում հանրակրթական ընդհանուր և մասնագիտացված ծրագրերի համար գործում է գնահատման 10 միավորային սանդղակ: Ընթացիկ գնահատման ժամանակ կարող է կիրառվել նաև գնահատման այլ սանդղակ, որը բերվում է 10 միավորային գրանցման: Պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման այլ սանդղակները բերվում են 10 կամ 20 միավորային գրանցման:

10. Առաջին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում. ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 846-Ն հրամանով հաստատված կարգի:

11. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Հանրակրթական ընդհանուր ծրագրի առարկաներից սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների միջոցով՝ տարեկան գնահատականները՝ բացառությամբ սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի 20-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքի:

12. Տարրական դպրոցում յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող և վերականգնող վարժություններին ու խաղերին՝ Նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:

13. Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2017թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը ներառյալ, ձմեռային՝ 2017թ. դեկտեմբերի 25-ից 2018թ. հունվարի 7-ը ներառյալ, գարնանային՝ 2018թ. մարտի 26-ից ապրիլի 1-ը ներառյալ:

14. Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2017թ. հոկտեմբերի 23-ից նոյեմբերի 5-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2017թ. դեկտեմբերի 25-ից 2018թ. հունվարի 21-ը ներառյալ, գարնանայինը՝ 2018թ. մարտի 19-ից ապրիլի 1-ը ներառյալ:

15. Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2017թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2017թ. դեկտեմբերի 25-ից 2018թ. հունվարի 21-ը ներառյալ և գարնանայինը՝ 2018թ. մարտի 26-ից ապրիլի 1-ը ներառյալ:

16. Նախարարությունը անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետներ և այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ բաց թողնված ժամերը մինչև ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու և ըստ Հաստատության ենթակայության՝ Լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով: Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում Հաստատության դիմումի հիման վրա Լիազոր մարմինը (մարզպետը, Երևանի քաղաքապետը) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելով Նախարարությանը:

17. Նախարարության ենթակայության հաստատություններում սույն հրամանով հաստատված Հավելված 2-ի 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետների փոփոխությունները, ինչպես նաև Հաստատության կողմից լրացուցիչ արձակուրդի նախատեսումը կատարվում է Հաստատության նախաձեռնությամբ, Նախարարության համաձայնությամբ:

18. Մասնագիտացված դպրոցի դասարանների (խմբերի) միջին խտությունը սահմանվում է 20 սովորող (ընդ որում՝ սովորողների թիվը չի կարող գերազանցել 25-ը): Սահմանված խտությունից ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել Մասնագիտացված դպրոցի ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ դպրոցի խորհրդի որոշմամբ՝ Լիազոր մարմնի թույլտվությամբ:

19. Դպրոցական (մասնագիտական) բաղադրիչի տնօրինման կարգ.

1) Դպրոցական (մասնագիտական) բաղադրիչում ընդգրված ռազմագիտության, սպորտի որևէ բնագավառի, արհեստների և արվեստների որևէ ճյուղի, գիտության որևէ բնագավառի մասնագիտացված ծրագրերը (ենթածրագրերը) ներկայացվում են մի քանի առարկաների (դասընթացների) միջոցով:

2) Դպրոցական (մասնագիտական) բաղադրիչի ժամաքանակը Մասնագիտացված դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ հատկացվում է՝

ա. Նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին (համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի 19-րդ կետի 2-րդ ենթակետի),

բ. Մասնագիտացված դպրոցի կողմից ներկայացված և Նախարարության կողմից երաշխավորված առարկաներին (դասընթացներին)՝ սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի 19-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի պահանջներին համապատասխան:

3) Դպրոցական (մասնագիտական) բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկն ամրագրվում է Մասնագիտացված դպրոցի ուսումնական պլանում և դասացուցակում:

4) Դպրոցական (մասնագիտական) բաղադրիչի ժամաքանակը Ուսումնական պլանի հանրակրթական ընդհանուր ծրագրի առարկաներին տրամադրվելու դեպքում դասարանը (խումբը) կիսելու հարցը կարգավորվում է սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի «Հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումների» համաձայն:

5) Հանրակրթական ընդհանուր ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում իրականացվում է սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի 20-րդ կետի պահանջներին համապատասխան:

6) Հանրակրթական մասնագիտացված ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում կարող է իրականացվել՝ համաձայն տվյալ առարկայի (դասընթացի) ծրագրի:

20. Օտար լեզվի ընտրության կարգ.

1) Մասնագիտացված դպրոցում դասավանդվում է առնվազն երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու:

2) Երրորդ (հիմնական և մյուս օտար լեզվից բացի) օտար լեզու կարելի է դասավանդել սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի 21-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին համապատասխան:

3) Մասնագիտացված դպրոցի մանկավարժական խորհրդի և ըստ Մասնագիտացված դպրոցի ենթակայության՝ լիազոր մարմնի առաջարկությունների հիման վրա, հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն Նախարարության կողմից կարող է փոխարինվել այլ օտար լեզվով, ինչպես նաև որոշվել նոր հիմնադրված Մասնագիտացված դպրոցում դասավանդվող երկրորդ օտար լեզուն:

21. Սույն հրամանով հաստատված Հավելված 2.1-ի աղյուսակների պարզաբանումներ.

1) Սույն հրամանով հաստատված Հավելված 2.1-ի Աղյուսակ 1-ում և Աղյուսակ 2-ում՝

ա. Հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող առաջին աստիճանի մասնագիտացված ուսումնական հաստատության դասացուցակում 5-րդ, իսկ երկրորդ և երրորդ աստիճանի մասնագիտացված ուսումնական հաստատության դասացուցակում՝ 6-րդ դասաժամից հետո նախատեսվում է առնվազն մեկ ժամ տևողությամբ ընդմիջում:

բ. Կրթական առաջին, երկրորդ և երրորդ աստիճանի մասնագիտական բաղադրիչը մասնագիտացված ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ բաշխվում է ըստ դասարանների:

գ. Բնագիտական առարկաներ են համարվում ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը և աշխարհագրությունը:

դ. Օտար լեզուներ են համարվում ռուսերենը, անգլերենը, գերմաներենը, ֆրանսերենը և այլն:

Հավելված 2.1
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2016 թվականի հունիսի 27-ի N 670-Ն հրամանի

Աղյուսակ 1

Առաջին և երկրորդ աստիճանի հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող մասնագիտացված ուսումնական հաստատության ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	2	2	3	3	3	3	3	3
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց եկեղեցու պատմություն	-	-	-	-	1	1	1	1	1
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-
Ընդամենը (պետական բաղադրիչ)	20	23	24	26	27	28.5	31.5	32.5	32.5
Դպրոցական (մասնագիտական) բաղադրիչ (ըստ կրթական աստիճանների)	17				23				

Աղյուսակ 2

Երրորդ աստիճանի հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող մասնագիտացված ուսումնական հաստատության ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	**Շաբաթական ժամերի քանակը**		
	X	**XI**	**XII**
Հայոց լեզու	2	2	2
Հայ գրականություն	2	2	2
Հայոց պատմություն	2	2	2
Օտար լեզու-1 (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն)	2	2	2
Օտար լեզու-2 (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն)	2	2	2
Հասարակագիտություն	2	1	1
Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
Բնագիտական առարկա	2	1	1
Բնագիտական առարկա	1	1	-
Բնագիտական առարկա	1	-	-
Բնագիտական առարկա	1	-	-
Ինֆորմատիկա	1	1	1
Ֆիզկուլտուրա	3	3	1.5
ՆԶՊ	1	1	-
Ընդամենը (պետական բաղադրիչ)	25	21	17.5
Դպրոցական (մասնագիտական) բաղադրիչ (ըստ կրթական աստիճանների)	50.5		

Հավելված 3
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2017 թվականի - ի -ի
N - Ն հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Հանրակրթական հիմնական հատուկ պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) 2017-2018 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները (այսուհետ՝ Ուսումնական պլան) մշակված են հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների հիման վրա՝ հաշվի առնելով հանրակրթական հատուկ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների առանձին տիպերի առանձնահատկությունները: Ստորև տրված Ուսումնական պլանները ներառում են հանրակրթական հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների բոլոր տիպերը:

2. Ուսումնական պլանները (բացառությամբ սույն հրամանով հաստատված Հավելված 3.1-ի Աղյուսակներ՝ 5, 6, 7, 8, 9-ի) ունեն երեք՝ պետական, դպրոցական և զարգացնող, հատուկ մանկավարժական բաղադրիչներ: Պետական, դպրոցական և զարգացնող, հատուկ մանկավարժական բաղադրիչները պարտադիր են և պետական ուսումնական հատուկ հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից:

3. Հակասոցիալական վարք դրսևորած երեխաների Հաստատությունում անձի ձևավորման, նրա սոցիալ-հոգեբանական հմտությունների և նախասիրությունների զարգացման նպատակով կազմակերպված խմբակների գործունեությունը իրականացվում է՝ համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 3-ի 43-րդ կետի 7-րդ ենթակետի:

4. Յուրաքանչյուր Հաստատություն ուսումնական պլանի հիման վրա դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ մշակում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլանը(ները):

5. Հաստատության ավագ դպրոցում (դասարանում) ուսուցումը կազմակերպվում է «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների» (սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի) հիման վրա:

6. Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) համաձայնությամբ՝

1) բազմահամակազմ կամ թերբեռնված դասարանների առկայության դեպքում,

2) Նախարարության կողմից երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում իրականացնելու դեպքում:

7. Ուսումնական պլանի՝

1) դպրոցական բաղադրիչի ժամաքանակի տնօրինման կարգը սահմանված է հանրակրթական հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ուսումնական պլանների (սույն հրամանով հաստատված Հավելված 3) «Հանրակրթական հատուկ ուսումնական հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումների» 27-րդ կետում,

2) օտար լեզվի ընտրությունը՝ հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատատության ուսումնական պլանի Հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումների «Օտար լեզվի ընտրության կարգ»-ում (սույն հրամանով հաստատված Հավելված 1, կետ 21):

Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հանրակրթական հատուկ կրթահամալիրում (չլսող և թույլ լսող երեխաների դասարաններ) հիմնական ռուսաց լեզվից բացի, որպես երկրորդ օտար լեզու, դասավանդվում է «Անգլերեն լեզու» առարկան՝ սկսած 5-րդ դասարանից (շաբաթական 1.5 կամ 2 ժամ ժանրաբեռնվածությամբ)՝ ՀՀ ԿԳ նախարարի 28.06.2012թ. N 653 – Ա/Ք հրամանով հաստատված ծրագրով:

8. Անհրաժեշտության դեպքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ բացառությամբ չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների, ուսուցումը կազմակերպվում է տնային պայմաններում՝ համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի Աղյուսակ 9-ի և Հավելված 1-ի 50-րդ կետի 11-րդ ենթակետի պահանջների):

9. Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների անհատական ուսուցումը իրականացվում է համաձայն սույն հրամանով հաստատված Հավելված 3.1-ի Աղյուսակ 9-ի:

10. Ուսումնական պարապմունքները Հաստատությունում սկսվում են 2017թ. սեպտեմբերի 1-ին, ավարտվում 2018թ. մայիսի 26-ին՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ և 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:

11. Ուսումնական պլանի պետական և դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացման ապահովմանը:

12. Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հանրակրթական հատուկ դպրոցի (դասարանների) ուսումնական պլանի պետական և դպրոցական բաղադրիչներն ապահովում են թեթև, չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների առարկայական ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացումը:

13. Հաստատությունում (2-12-րդ դասարաններ) գործում է սովորողների գնահատման 10-միավորային սանդղակ:

14. Գիտելիքների ստուգումների, հիմնական և միջնակարգ կրթության ավարտական և պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման այլ սանդղակները բերվում են 10 կամ 20-միավորային գրանցման:

15. Մտավոր հետամնացություն ունեցող սովորողների գիտելիքների ստուգումը կատարվում է՝ համաձայն անհատական ուսուցման պլանի (ԱՈՒՊ):

16. Այն սովորողների համար, ովքեր կրթական կարիքի գնահատման արդյունքում չեն կարող յուրացնել ուսումնական որևէ առարկայի հատուկ ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույն ծավալը, Ուսումնական պլանով այդ առարկաներին հատկացված ժամերը տրամադրվում են սովորողի ընդունակություններին և հնարավորություններին համապատասխան՝ ԱՈՒՊ-ով սահմանված առարկայական ծրագրից ընտրված և տվյալ սովորողին հարմարեցված բովանդակային բաղադրիչների ուսումնասիրմանը:

17. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների (գնահատականի) վրա՝ տարեկան գնահատականները, բացառությամբ սույն հրամանով հաստատված Հավելված 3-ի 18-րդ կետով նախատեսված դեպքի:

18. Առաջին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում. ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 4-ի 846-Ն հրամանով հաստատված կարգի:

19. Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի (մեկ ակադեմիական դասաժամի) տևողությունը 45 րոպե է:

20. Տարրական դպրոցում յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող և վերականգնող վարժություններին ու խաղերին՝ Նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:

21. Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2017թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը ներառյալ, ձմեռային՝ 2017թ. դեկտեմբերի 25-ից 2018թ. հունվարի 7-ը ներառյալ, գարնանային՝ 2018թ. մարտի 26-ից ապրիլի 1-ը ներառյալ:

22. Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2017թ. հոկտեմբերի 23-ից նոյեմբերի 5-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2017թ. դեկտեմբերի 25-ից 2018թ. հունվարի 21-ը ներառյալ, գարնանայինը՝ 2018թ. մարտի 19-ից ապրիլի 1-ը ներառյալ:

23. Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2017թ. հոկտեմբերի 30-ից նոյենբերի 5-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2017թ. դեկտեմբերի 25-ից 2018թ. հունվարի 21-ը ներառյալ և գարնանայինը՝ 2018թ. մարտի 26-ից ապրիլի 1-ը ներառյալ:

24. Նախարարության, տարածքային կառավարման լիազորված մարմնի (Երևանի քաղաքապետարանի) (այսուհետ՝ Լիազոր մարմին) ենթակայության հաստատությունների համար սույն հրամանով հաստատված Հավելված 3-ի 21-րդ, 22-րդ և 23-րդ կետերով սահման-ված արձակուրդների ժամկետներում Հաստատության նախաձեռնության դեպքում Լիազոր մարմնի կողմից կարող են կատարել փոփոխություններ: Լիազոր մարմինը (մարզպետը, Երևանի քաղաքապետը) փոփոխությունները առնվազն 5 աշխատանքային օր առաջ համաձայնեցնում է Նախարարության հետ:

25. Նախարարությունը անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ և այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ բաց թողնված ժամերը մինչև ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու և ըստ Հաստատության ենթակայության՝ Լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով: Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում Հաստատության դիմումի հիման վրա Լիազոր մարմինը (մարզպետը, Երևանի քաղաքապետը) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելով Նախարարությանը:

26. Նախարարության ենթակայության հաստատություններում սույն հրամանով հաստատված Հավելված 3-ի 21-րդ, 22-րդ և 23-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետների փոփոխությունները, ինչպես նաև Հաստատության կողմից լրացուցիչ արձակուրդի նախատեսումը կատարվում է Հաստատության նախաձեռնությամբ, Նախա-րարության համաձայնությամբ:

27. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգ.

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է Ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված և (կամ) Նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայա-ցանկում ընդգրկված առարկաներին, հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման ծրագրերի իրականացմանը և (կամ) սովորողների նախասիրություններին, Հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով:

2) Նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվում է «Կիրառական տնտեսագիտություն» (9-րդ դասարան), «Կյանքի հմտություններ» (2-8-րդ դասարաններ), «Բնապահպանություն» (7-8-րդ կամ 8-9-րդ դասարաններ), «Էկոլոգիա» (8-9-րդ դասարաններ), «Էներգիայի և ռեուրսների օգտագործում» (7-րդ կամ 8-րդ դասարան), «Ֆերմերային գործ» (11-12-րդ դասարաններ), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Հայոց եկեղեցու պատմություն» (2-4-րդ դասարաններ), «Հոգեբանություն» (7-8-րդ դասարաններ), «Մշակույթի պատմություն» (7-9-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը: Նշված առարկաների ուսուցումը այլ դասարաններում հաստատության կողմից կարող է իրականացվել դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

3) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

4) Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ ելնելով Հաստատության, դասարանի պատրաստվածությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաև Նախարարության հանձնարարականներից:

5) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը պարտադիր է:

6) Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է Հաստատության ուսումնական պլանում և դասացուցակում:

7) Ուսումնական պլանի պետական բաղադրիչում ընդգրկված առարկաների դասաժամերին դասարանը կիսելու հարցը կարգավորվում է՝ սույն հրամանով հաստատված Հավելված 3-ի 31-35-րդ կետերի պահանջների համաձայն:

28. Զարգացնող, հատուկ մանկավարժական ժամաքանակի տնօրինման կարգ.

1) Զարգացնող, հատուկ մանկավարժական պարապմունքներն անցկացվում են խմբային կամ անհատական պարապմունքների ձևով՝ ելնելով սովորողների կարիքներից: Պարապմունքներն ամրագրվում են դասացուցակում կամ առանձին կարգացուցակում: Անհատական պարապմունքների դեպքում զարգացնող, հատուկ մանկավարժական պարապմունքներին հատկացվող ժամաքանակը բաշխվում է շաբաթվա օրերի միջև՝ ամրագրվելով դասացուցակին կից կարգացուցակում:

2) Զարգացնող, հատուկ մանկավարժական խմբային պարապմունքի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող և վերականգնող վարժություններին ու խաղերին՝ ելնելով սովորողների կարիքներից:

29. Հաստատության դասարանի (խմբի) միջին խտությունը սանիտարական նորմերի պահպանմամբ սահմանվում է.

1) լսողության, տեսողության, հենաշարժական համակարգի, խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների, մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հանրակրթական հատուկ (օժանդակ) հաստատություններում՝ 15 սովորող (ընդ որում՝ սովորողների թիվը դասարանում (խմբում) չի կարող գերազանցել 18-ը),

2) չափավոր և ծանր մտավոր հետամնացություն և բազմակի խնդիրներ ունեցող սովորողների թիվը յուրաքանչյուր դասարանում (խմբում) չի կարող գերազանցել 9-ը,

3) հակասոցիալական վարք ունեցող երեխաների հանրակրթական հատուկ հաստատություններում՝ 20 աշակերտ (ընդ որում՝ սովորողների թիվը դասարանում (խմբում) չի կարող գերազանցել 25-ը):

30. Հիմնադրի կողմից սահմանված խտությունից ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել Հաստատության ֆինանսական միջոցների հաշվին՝ Հաստատության խորհրդի որոշմամբ:

31. Լսողության, տեսողության, հենաշարժական համակարգի, խոսքի ծանր խանգարումներ, մտավոր հետամնացություն ունեցող երեխաների Հաստատության (դասարանների) տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ) «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» առարկաների դասաժամերին կարելի է դասարանը բաժանել երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 12 և ավելի է:

32. Հակասոցիալական վարք ունեցող երեխաների Հաստատության տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ) «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» առարկաների դասաժամերին կարելի է դասարանը բաժանել երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 20 և ավելի է:

33. Լսողության, տեսողության, հենաշարժական համակարգի, խոսքի ծանր խանգարումներ, մտավոր հետամնացություն ունեցող երեխաների Հաստատության (դասարանների) միջին դպրոցում «Հայոց լեզու» (7-9-րդ դասարաններ), «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (5-9-րդ դասարաններ), «Ինֆորմատիկա» (6-9-րդ դասարաններ՝ համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 15 և ավելի է:

34. Հակասոցիալական վարք ունեցող երեխաների Հաստատության «Հայոց լեզու» (7-9-րդ դասարաններ), «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (5-9-րդ դասարաններ), «Ինֆորմատիկա» (6-9-րդ դասարաններ՝ համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 20 և ավելի է:

35. Միջին դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայի պարապմունքներին դասարանը կիսվում է երկու խմբի՝ տղաների և աղջիկների՝ անկախ սովորողների թվից (ուսուցումը կազմակերպվում է յուրաքանչյուր խմբի համար հաստատված համապատասխան առարկայական ծրագրով):

36. Տեսողության, լսողության, հենաշարժական համակարգի խախտումներով և մտավոր հետամնացություն ունեցող սովորողների հանրակրթական հատուկ հաստատություններում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան փոխարինվում է «Անվտանգ կենսագործունեություն» առարկայով:

37. Անհրաժեշտության դեպքում Հաստատությունն իրավասու է վերաբաշխելու առարկայի ուսուցմանը Ուսումնական պլանով հատկացված ժամերը՝ պահպանելով տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակը:

38. 8-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:

1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին:

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը:

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2018թ. հունվար-փետրվար ամիսներին:

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում գրանցումները կատարվում են առանձին էջում:

39. 6-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Հայոց պատմություն» և այլ առարկաների ծրագրերով ամսական առնվազն 1 (մեկ) ժամ ուսուցումը կազմակերպվում է համակարգչային կաբինետում (դրա առկայության դեպքում)՝ ելնելով յուրաքանչյուր առարկայից մատուցվող ուսումնական նյութի բովանդակային և դասավանդման մեթոդական պահանջներից: Այն առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է օգտագործել ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կայքում (http://www.aniedu.am/) և «Հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարանում» (http://lib.armedu.am) տեղադրված էլեկտրոնային ուսումնական նյութերը:

40. 6-7-րդ դասարաններում «Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաներից մեկը Հաստատության ընտրությամբ դասավանդվում է առաջին, մյուսը՝ երկրորդ կիսամյակում:

41. «Հայոց պատմության» և «Համաշխարհային պատմության» համաժամանակյա թեմաների ուսուցումն ապահովելու նպատակով ուսուցիչներին իրավունք է տրվում մասնակի փոփոխություններ կատարել նշված առարկաների դասացանկում՝ պահպանելով յուրաքանչյուր առարկային հատկացված տարեկան ընդհանուր ժամաքանակը:

42. Հաստատությունում ըստ կրթական ծրագրերի աստիճանների՝ տարրական, միջին և ավագ դպրոցներում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների համար «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցումը կարող է իրականացվել «Հանրակրթական դպրոցի հատուկ բժշկական խմբեր «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի 1-12-րդ դասարանների ծրագրով», Հաստատության խմբակների համար նախատեսված ժամաքանակի շրջանակում կամ տվյալ դասարանի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասաժամերին՝ անհատական ծրագրով: Հաստատությունում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների գնահատում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից չի կատարվում:

43. Սույն հրամանով հաստատված Հավելված 3.1-ի աղյուսակների պարզաբանումներ.

1) Սույն հրամանով հաստատված Հավելված 3.1-ի Աղյուսակ 1-ում Զարգացնող, հատուկ մանկավարժական պարապմունքների ժամերը տրամադրվում են՝

ա. բրայլյան համակարգի ուսուցմանը, մնացորդային տեսողական ընկալման զարգացմանը (պարապունքներն անցկացվում են անհատական ուսուցման ձևով)՝ չտեսնող երեխաների համար,

բ. «Կողմնորոշում շրջապատում» խմբային և անհատական պարապունքներին՝ չտեսնող երեխաների համար,

գ. «Արև» համակարգի համակարգչային ծրագրով սովորողների ուսումնառության (անհատական և խմբային) կազմակերպմանը՝ չտեսնող երեխաների համար,

դ. «Ռիթմիկա» առարկային,

ե. «Կերպարվեստ» առարկայի ժամերը կարելի է տրամադրել ռելիեֆային արվեստի ուսումնասիրությանը,

զ. լոգոպեդական անհատական և խմբային աշխատանքներին (թույլ տեսնող երեխաներ):

է. «Արև» համակարգի համակարգչային ծրագրով սովորողների ուսումնառությունը 9-րդ, 11-12-րդ դասարաններում իրականացվում է դպրոցական բաղադրիչի ժամաքանակի շրջանակում:

2) Սույն հրամանով հաստատված Հավելված 3.1-ի Աղյուսակ 2-ում և Աղյուսակ 2.1-ում Զարգացնող, հատուկ մանկավարժական պարապմունքների ժամերը տրամադրվում են լսողական ընկալման և արտաբերման զարգացման անհատական աշխատանքներին և բաշխվում հետևյալ կերպ՝

ա. 1-5-րդ դասարանների յուրաքանչյուր աշակերտի համար՝ շաբաթական 60 րոպե,

բ. 6-9-րդ դասարանների յուրաքանչյուր աշակերտի համար՝ շաբաթական 40 րոպե:

գ. Հիմնական դպրոցի «Մայրենի» և «Հայոց լեզու» առարկաների դասաժամերից յուրաքանչյուր դասարանում շաբաթական 2-ական ժամ հատկացվում է «Խոսքի զարգացում» դասընթացին:

3) Սույն հրամանով հաստատված Հավելված 3.1-ի Աղյուսակ 3-ում՝ Զարգացնող, հատուկ մանկավարժական պարապմունքներին տրամադրված ժամերը հատկացվում են լոգոպեդական անհատական և խմբային (4-6 սովորող), ինչպես նաև ամբողջ դասարանի հետ աշխատանքների իրականացմանը:

4) Սույն հրամանով հաստատված Հավելված 3.1-ի Աղյուսակ 4-ում Զարգացնող, հատուկ մանկավարժական պարապմունքների ժամերը հատկացվում են «Հանրակրթական դպրոցի հատուկ բժշկական խմբերի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի 1-12-րդ դասարանների ծրագրով» դասավանդվող բուժական ֆիզկուլտուրային և լոգոպեդական պարապմունքներին:

5) Սույն հրամանով հաստատված Հավելված 3.1-ի Աղյուսակ 5-ում՝

ա. Յուրաքանչյուր 4 դասարանի համար նախատեսվում է մեկ հատուկ մանկավարժ՝ երեխայի զարգացման առանձնահատկությանը բնորոշ կարիքներին նպատակաուղղված հատուկ մանկավարժական խմբային և անհատական գործընթացի իրականացման, ԱՈՒՊ-ներով նախատեսված աշխատանքների ապահովման, ինչպես նաև սովորողների սոցիալական հմտությունների զարգացման նպատակով:

բ. 1-9-րդ դասարաններում ուսուցումն իրականացվում է թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների առարկայական հատուկ ծրագրերին համապատասխան, իսկ միջին և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների համար՝ համապատասխան ծրագրերով:

գ. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաներով համալրված դասարանում կարող են ընդգրկվել նաև միջին և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ուսումնական ծրագրեր ուսումնասիրող մինչև 4 սովորող ներառյալ:

դ. 1-9-րդ դասարաններում սովորողը, որպես կանոն, փոխադրվում է հաջորդ դասարան՝ անհատական ուսուցման պլանով սահմանված գիտելիքների, հմտությունների և կարողությունների անհրաժեշտ նվազագույնի յուրացման պայմանով: Առանձին դեպքերում սովորողը

կարող է մնալ նույն դասարանում՝ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ և ծնողի (օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ:

6) Սույն հրամանով հաստատված Հավելված 3.1-ի Աղյուսակ 6-ում՝

ա. Յուրաքանչյուր 4 դասարանի համար նախատեսվում է մեկ հատուկ մանկավարժ՝ երեխայի զարգացման առանձնահատկությանը բնորոշ կարիքներին նպատակաուղղված հատուկ մանկավարժական խմբային և անհատական գործընթացի իրականացման, ԱՈՒՊ-ներով նախատեսված աշխատանքների ապահովման, ինչպես նաև սովորողների սոցիալական հմտությունների զարգացման նպատակով:

բ. «Հայրենագիտություն» առարկան դիտարկվում է՝ որպես հայրենի երկրի պատմության և աշխարհագրության ինտեգրված դասընթաց:

գ. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասաժամերը հատկացվում են չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների «Ես և շրջակա աշխարհը» առարկայական չափորոշչով և ծրագրով նախատեսված ենթաբաժիններին (Սոցիալ-կենցաղային կողմնորոշում: Ճանապարհային երթևեկություն: Բնություն: Վերարտադրողական առողջություն: Ժամ, ժամանակ: Ազատ ժամանց):

դ. «Տեխնոլոգիա» առարկայի դասաժամերը բոլոր դասարաններում դասացուցակով պետք է լինեն նույն ժամին՝ երեխաների ընդգրկումն ըստ նախասիրությունների ապահովելու համար:

ե. «Երաժշտություն» առարկայի դասաժամերի շրջանակում իրականացվում է դերախաղի, պարի ուսուցում:

զ. Մտավոր հետամնացություն ունեցող սովորողների ուսումնառության արդյունքների (գիտելիքներ) ստուգումը իրականացվում է՝ համաձայն անհատական ուսուցման պլանի (ԱՈՒՊ-ի):

է. Միջին և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաներով համալրված դասարանում թեթև մտավոր հետամնացություն ունեցող սովորողների ընդգրկումը չի երաշխավորվում:

7) Սույն հրամանով հաստատված Հավելված 3.1-ի Աղյուսակ 7-ում՝

ա. Հակասոցիալական վարք դրսևորած երեխաների հատուկ հանրակրթական հաստատություններն աշխատում են շուրջտարյա ռեժիմով:

բ. Անձի ձևավորման, նրա սոցիալ-հոգեբանական հմտությունների և նախասիրությունների զարգացման նպատակով յուրաքանչյուր դասարանի համար կազմակերպվում է 1 (մեկ) խմբակ: Խմբակները կոմպլեկտավորվում են՝ ըստ երեխաների նախասիրությունների:

8) Սույն հրամանով հաստատված Հավելված 3.1-ի Աղյուսակ 8-ում՝

ա. Յուրաքանչյուր 4 դասարանի համար նախատեսվում է մեկ հատուկ մանկավարժ՝ երեխայի զարգացման առանձնահատկությանը բնորոշ կարիքներին նպատակաուղղված հատուկ մանկավարժական խմբային և անհատական գործընթացի իրականացման, ԱՈՒՊ-ով նախատեսված աշխատանքների ապահովման, ինչպես նաև սովորողների սոցիալական հմտությունների զարգացման նպատակով:

բ. Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների արհեստագործական հատուկ խմբերի ուսուցումը իրականացվում է մտավոր հետամնացություն ունեցող երեխաների համար Նախարարության կողմից հաստատված առարկայական ծրագրերով:

Հավելված 3.1
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2016 թվականի ի -ի N հրամանի

Աղյուսակ 1

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հանրակրթական հատուկ ուսումնական հաստատության ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	**Շաբաթական ժամերի քանակը**									
	Նախ. խումբ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	4	7	8	8	8	7	6	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	-	3	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	-	2	2	3	3	3	3	3	3
Օտար լեզու	-	-	-	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	3	4	4	4	4	5	5	-	-	-
Երաժշտություն	4	2	1	1	1	1	0,5	0.5	-	-
Կերպարվեստ	2	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	-	1	1	2	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	-	1	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-		1	1	2	-
Հայաստանի աշխարհ.	-	-	-	-	-	-	-	-	-	2
Համաշխարհային պատմ.	-	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց պատմություն	-	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	-	1	1	1	1	1
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	-	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	-	-	-	-	1	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	2	1	1	1	1	2	-	-
Անվտ. կենսագործունեութ.	-	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	3	3	2	2	2	3	3	3	3	3
Շախմատ	-	-	2	2	2	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	-	1	2	2	2	2.5	2.5	2.5	2.5
Ընդամենը	18	20	24	26	28	29	31	34	35	35
Զարգացնող, հատուկ մանկավարժական պարապմունքներ	6	6	6	6	6	4	4	4	4	4

Աղյուսակ 2

Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական հաստատության ուսումնական պլան
(չլսող երեխաների դասարաններ)

Ուսումնական առարկաներ	**Շաբաթական ժամերի քանակը**									
	Նախ. խումբ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	5	7	8	9	8	8	10	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	-	5	5	5
Գրականություն	-	-	-	-	-	-	-	4	4	4
Առարկ. գործնական ուսուցում	2	2	2	2	4	-	-	-	-	-
Ռուսաց լեզու	-	-	2	2	2	2	2	-	-	-
Անգլերեն						1.5				
Ժեստերի լեզու	1	1	1	1	1	1	1	1	1	1
Մաթեմատիկա	4	4	4	4	4	5	5	-	-	-
Ռիթմիկա	2	1	1	1	1	1	0,5	0,5	-	-
Կերպարվեստ	-	-	1	1	1	1	0,5	0,5	-	-
Ես և շրջակա աշխարհը	1	1	1	1	2	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	-	1	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	-	1	1	2	-
Հայաստանի աշխարհագր.	-	-	-	-	-	-	-	-	-	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց պատմություն	-	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5
Հայոց եկեղեցու պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1	1
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	-	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	-	-	-	-	1	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	-	-	-	-	-	1	1	2	-	-
Անվտանգ կենսագործ.	-	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	3	3	2	2	2	3	3	3	3	3
Շախմատ	-	-	2	2	2	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	-	1	1	1.5	0.5	2.5	2.5	2.5
Ընդամենը	18	20	24	26	28	29	31	34	35	35
Զարգացնող, հատուկ մանկավարժական պարապ-մունքներ	20	18	18	18	18	18	6	6	6	4

Աղյուսակ 2.1

Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական հաստատության ուսումնական պլան
(թույլ լսող երեխաների դասարաններ)

Ուսումնական առարկաներ	**Շաբաթական ժամերի քանակը**									
	Նախ. խումբ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	5	7	8	9	8	8	8	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	-	4	3	4
Գրականություն	-	-	-	-	-	-	-	3	3	3
Առարկայական գործ. ուսուց.	2	2	2	2	2	-	-	-	-	-
Ռուսաց լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2
Անգլերեն				2						
Ժեստերի լեզու	-	-	-	-	1	1	1	1	1	1
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	5	-	-	-
Երաժշտություն (Ռիթմիկա)	2	1	1	1	1	1	0.5	0.5	-	-
Կերպարվեստ	1	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Ես և շրջակա աշխարհը	1	1	1	1	1	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	-	1	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	-	1	1	2	-
Հայաստանի աշխարհ.	-	-	-	-	-	-	-	-	-	2
Համաշխարհային պատմ.	-	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց պատմություն	-	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	-	1	1	1	1	1
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	-	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	-	-	-	-	1	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	-	-	-	-	-	1	1	2	-	-
Անվտանգ կենսագործ.	-	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	3	3	2	2	2	3	3	3	3	3
Շախմատ	-	-	2	2	2	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	-	1	-	3	3	2.5	2.5	3.5	2.5
Ընդամենը	18	20	24	26	28	29	31	34	35	35
Զարգացնող, հատուկ մանկ. պարապմունքներ	20	18	18	18	18	18	6	6	6	4

Աղյուսակ 3

Խոսքի ծանր խանգարում ունեցող երեխաների հանրակրթական հատուկ կրթահամալիրի ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	**Շաբաթական ժամերի քանակը**									
	Նախ. խումբ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	5	7	8	8	8	7	6	-	-	-
Հայոց լեզու	-	-	-		-	-	-	3	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	-	2	2	3	3	3	3	3	3
Օտար լեզու	-	-	-	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	3	4	4	4	4	5	5	-	-	-
Երաժշտություն	3	2	1	1	1	1	0,5	0.5	-	-
Կերպարվեստ	2	2	1	1	1	1	0,5	0.5	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	-	1	1	2	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	-	1	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-		-	-	-	-	1	1	2	-
Հայաստանի աշխարհ.	-	-	-	-	-	-	-	-	-	2
Համաշխարհային պատմ.	-	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց պատմություն	-	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	-	1	1	1	1	1
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	-	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	-	-	-	-	1	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	2	1	1	1	1	2	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	3	3	2	2	2	3	3	3	3	3
Շախմատ	-	-	2	2	2	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	-	1	2	2	2	2.5	2.5	2.5	2.5
Ընդամենը	18	20	24	26	28	29	31	34	35	35
Զարգացնող, հատուկ մանկ. պարապմունքներ	6	6	6	6	6	6	4	4	4	4

Աղյուսակ 4

Հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հանրակրթական հատուկ ուսումնական հաստատության ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	**Շաբաթական ժամերի քանակը**								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	2	2	3	3	3	3	3	3
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0,5	0.5	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0,5	0.5	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-
Հայաստանի աշխարհ.	-	-	-	-	-	-	-	-	2
Համաշխարհային պատմ.	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5
Հայոց եկեղեցու պատմություն	-	-	-	-	1	1	1	1	1
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-
Անվտանգ կենսագործ.	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	2	2	2	2.5	2.5	2.5	2.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35
Զարգացնող, հատուկ մանկա-վարժական պարապմունքներ	6	6	6	4	4	4	4	4	4

Աղյուսակ 5

Թեթև մտավոր հետամնացություն ունեցող
երեխաների դասարանների ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	**Շաբաթական ժամերի քանակը**								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	2	2	3	3	3	3	3	3
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-
Հայաստանի աշխարհ.	-	-	-	-	-	-	-	-	2
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5
Համաշխարհային պատմ.	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	1	1	1	1
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-
Անվտանգ կենսագործ.	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	2	2	2	2.5	2.5	2.5	2.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35

Աղյուսակ 6

Չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հանրակրթական հատուկ (օժանդակ) ուսումնական հաստատության (դասարանների) ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	**Շաբաթական ժամերի քանակը**								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Լեզու և ընթերցանություն	7	8	8	8	8	7	8	7	7
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	5	5	5
Ես և շրջակա աշխարհը	2	2	2	2	2	3	3	3	3
Երաժշտություն	2	2	2	2	2	2	2	2	2
Կերպարվեստ	1	1	2	2	1	1	1	2	2
Տեխնոլոգիա (Ձեռքի աշխատանք)	1	2	2	3	1	3	5	6	6
Բնագիտություն	-	-	-	-	4	4	4	4	4
Հայրենագիտություն	-	-	-	-	4	4	4	4	4
Ֆիզկուլտուրա	2	2	2	2	2	2	2	2	2
Դպրոցական բաղադրիչ	1	3	4	4	-	-	-	-	-
Ընդամենը	20	24	26	27	29	31	34	35	35

Աղյուսակ 7

Հակասոցիալական վարք դրսևորած երեխաների
հանրակրթական հատուկ հաստատության
ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	**Շաբաթական ժամերի քանակը**					
	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	8	7	6	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	3	2	2
Գրականություն	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	3	3	3	3	3	3
Օտար լեզու	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	5	5	-	-	-
Երաժշտություն	1	1	0,5	0.5	-	-
Կերպարվեստ	1	1	0,5	0.5	-	-
Ես և շրջակա աշխարհը	2	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	1	-	-	-	-
Բնագիտություն	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	1	1	2	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	2
Համաշխարհային պատմություն	-	-	1	1	1	1
Հայոց պատմություն	-	-	1.5	1.5	1.5	1.5
Հայոց եկեղեցու պատմություն		1	1	1	1	1
Հասարակագիտություն	-	-		-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	1	2	2
Կենսաբանություն	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	1	1	1	2	-	-
ՆԶՊ	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	2	3	3	3	3	3
Շախմատ	2	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	2	2	2.5	2.5	2.5	2.5
Ընդամենը	28	29	31	34	35	35

Աղյուսակ 8

Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների արհեստագործական հատուկ խմբերի ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	**Շաբաթական ժամերի քանակը**		
	X	XI	XII
Հայոց լեզու, գրականություն	3	3	3
Մաթեմատիկա	3	3	3
Ռուսաց լեզու	1	1	1
Սոց. կենցաղ. հմտություններ	2	1	1
Պատմություն	2	2	1
Բնագիտություն	2	2	2
Ֆիզկուլտուրա	3	3	3
Առողջ ապրելակերպ	-	2	2
Հասարակագիտություն	1	1	1
Տեխնոլոգիա	17	16	17
Ընդամենը	34	34	34

Աղյուսակ 9

Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	**Շաբաթական ժամերի քանակը**								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Լեզու և ընթերցանություն	3	3	3	3	3	3	3	3	3
Մաթեմատիկա	2	2	2	2	2	2	2	2	2
Ես և շրջակա աշխարհը	1	2	2	2	1	1	1	1	1
Տեխնոլոգիա (Ձեռքի աշխատանք)	1	2	2	2	1	2	2	2	2
Բնագիտություն	-	-	-	-	1	1	1	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	1	2	2	2
Ընդամենը	7	9	9	9	9	10	11	11	11